



## ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄ ԶԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ



ՄԱԿՈՐ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄՄԻԿ)

Այս գրքույկը թարգմանվել է և վերարտադրվել է իրավատեր Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) թույլտվությամբ՝ անգլերեն բնօրինակի հիման վրա: ՄՍՀԿ քարտուղարությունը պարտավորություն է պատասխանատվություն չի կրում թարգմանության կամ տվյալների որեւէ փոփոխության համար:

## Բովանդակություն

Ներածություն	3
<i>Մտավոր սեփականություն</i>	3
<i>Մտավոր սեփականության երկու բնագավառը՝ արդյունաբերական սեփականություն և հեղինակային իրավունք</i>	4
Չեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործություններ	6
Պահպանվող իրավունքներ	7
<i>Վերարտադրության և տարածման իրավունքներ, հարակից իրավունքներ</i>	8
<i>Հրապարակային կատարման, հեռարձակման, հանրությանը հաղորդման, ինչպես նաև ստեղծագործությունները հանրությանը մատչելի դարձնելու իրավունքներ</i>	9
<i>Թարգմանության և վերափոխման իրավունքներ</i>	10
<i>Անձնական ոչ գույքային իրավունքներ</i>	10
Իրավունքների սահմանափակումներ	11
Չեղինակային իրավունքի գործողության ժամկետը	12
Չեղինակային իրավունքի տիրապետումը, կիրարկումը և փոխանցումը	13
Չեղինակային իրավունքի պաշտպանությունը	14
Չարակից իրավունքներ	16
ՄՍՀԿ դերը	20
Լրացուցիչ տեղեկություններ	21





## Ներածություն

Սույն գրքույկի նպատակն է սկսնակներին և ոչ մասնագետներին ծանոթացնել հեղինակային և հարակից իրավունքներին: Հրատարակության մեջ հանգամանորեն ներկայացվում են հեղինակային իրավունքի և դրա կիրարկման կարևոր հիմունքները, նկարագրվում հեղինակային և հարակից իրավունքներով պահպանվող իրավունքների տեսակները, ինչպես նաև այդ իրավունքների սահմանափակումները: Գրքույկը հակիրճ ներկայացնում է հեղինակային իրավունքի փոխանցման և պաշտպանության վերաբերյալ դրույթները:

Չնայած գրքույկը չի տալիս պատասխաններ որոշակի իրավական կամ վարչական բնույթի հարցերին (օրինակ՝ ինչպես վարվել, եթե տեղի է ունեցել հեղինակային իրավունքի խախտում), սակայն օգնում է կողմնորոշվելու և, անհրաժեշտության դեպքում, դիմելու մտավոր սեփականության կամ հեղինակային իրավունքի ազգային մարմիններ: Գրքույկի վերջում, «Լրացուցիչ տեղեկություններ» բաժնում ներկայացվում են հետաքրքիր կայքեր և հրատարակություններ այն ընթերցողների համար, ում ավելի մանրամասն տեղեկություններ են հարկավոր:

ՄՄՀԿ-ի (WIPO) մյուս գրքույկը՝ *Պատկերացում արդյունաբերական սեփականության մասին* վերնագրով, ծանոթացնում է արդյունաբերական սեփականությանը, ներառյալ գյուտերի արտոնագրերը, արդյունաբերական նմուշները, ապրանքային նշանները և աշխարհագրական նշումները:

## Մտավոր սեփականություն

Հեղինակային իրավունքի մասին օրենսդրությունն այն լայնածավալ իրավական նորմերի ամբողջական մասն է, որը կոչվում է մտավոր սեփականություն: Մտավոր սեփականություն սահմանումը վերաբերում է մարդու մտավոր ստեղծագործական գործունեության արդյունքներին: Մտավոր սեփականության իրավունքները պաշտպանում են ստեղծագործողների շահերը՝ նրանց ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքներ տրամադրելու միջոցով:

*Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը* հիմնադրող 1967թ. կրնվենցիայի համաձայն, մտավոր սեփականության իրավունքներով պահպանություն տրվեց հետևյալ օբյեկտներին.

- գրականության, գիտության և արվեստի բնագավառի ստեղծագործություններին,
- կատարողների կատարումներին, հնչյունագրերին և ռադիո-հեռուստատեսային հաղորդումներին,
- բոլոր բնագավառներում մարդու ստեղծագործական գործունեությամբ ստեղծված գյուտերին,
- գիտական հայտնագործություններին,
- արդյունաբերական նմուշներին,
- ապրանքային նշաններին, ապասարկման նշաններին, ֆիրմային և առևտրային անվանումներին,
- անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանությանը,
- արտադրության, գիտության, գրականության և արվեստի բնագավառներում մտավոր գործունեության արդյունքներին վերաբերող բոլոր այլ իրավունքներին:

Մտավոր սեփականությունը պարունակում է այն տեղեկություններն ու գիտելիքները, որոնք կարող են մարմնավորվել և արտահայտվել անսահմանափակ կրկնօրինակների տեսքով, աշխարհի տարբեր վայրերում: Սեփականությունը ոչ թե կրկնօրինակներն են, այլ դրանց մեջ արտացոլված տեղեկություններն ու գիտելիքները:



Մտավոր սեփականության իրավունքներն ունեն որոշակի սահմանափակումներ, ինչպիսիք են հեղինակային իրավունքի եւ արտոնագրերի գործողության ժամկետի սահմանափակումները:

Մտավոր սեփականության պահպանության կարելիությունն առաջին անգամ ճանաչվեց *Արդյունաբերական սեփականության պահպանության մասին փարիզյան կոնվենցիայով (1883թ.)*, ինչպես նաև *Գրական եւ զեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին Բեռնի կոնվենցիայով (1886թ.)*: Երկու կոնվենցիաներն էլ կառավարվում են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից (ՄՄՀԿ):

Սովորաբար, տարբեր երկրներում մտավոր սեփականությունը պահպանող օրենքների ընդունումը պայմանավորված է երկու հիմնական պատճառով: Առաջինը՝ հեղինակների ստեղծագործությունների նկատմամբ անձնական ոչ գույքային եւ գույքային իրավունքների իրավական պահպանության ու այդ ստեղծագործությունները հանրությանը հասանելի դարձնելու իրավունքի պահպանումն է: Երկրորդ պատճառը նպատակ ունի խթանել ստեղծագործական գործընթացը եւ տարածել ու պաշտպանել դրա արդյունքները, խրախուսել բարեխիղճ առեւտուրը, որը ներդրումներ կապահովի տնտեսության եւ հասարակության զարգացման գործում:

***Մտավոր սեփականության երկու բնագավառը՝ արդյունաբերական սեփականություն եւ հեղինակային իրավունք***

Մտավոր սեփականությունը բաժանվում է երկու բնագավառի՝ արդյունաբերական սեփականության, որը հասկացության լայն իմաստով պահպանում է գյուտերը, եւ հեղինակային իրավունքի, որը պահպանում է գրական եւ զեղարվեստական ստեղծագործությունները:

***Արդյունաբերական սեփականությունը*** արտահայտվում է տարբեր ձևերով: Այն ներառում է արտոնագրերը, որոնք պահպանություն են ապահովում գյուտերի նկատմամբ, եւ օգտակար մոդելները, այսինքն՝ զեղագիտական լուծումները, որոնք որոշում են իրի արտաքին տեսքը: Արդյունաբերական սեփականությունը ընդգրկում է նաեւ ապրանքային եւ սպասակման նշանները, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաները, ֆիրմային եւ առեւտրային անվանումները, ինչպես նաեւ աշխարհագրական նշումներն ու անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանությունը:

***Հեղինակային իրավունքի*** ոլորտին վերաբերում են զեղարվեստական ստեղծագործությունները, օրինակ՝ գրքերը, երաժշտությունը, կերպարվեստը, քանդակագործությունը, ֆիլմերը եւ տեխնոլոգիաների հիման վրա ստեղծված ստեղծագործությունները, ներառյալ համակարգչային ծրագրերն ու տվյալների բազաները: Գրեթե բոլոր եվրոպական լեզուներում, բացառությամբ անգլերենի, հեղինակային իրավունքը՝ «copyright», ասելով հասկանում են հեղինակի իրավունքները: «Copyright» արտահայտությունը (բառացիորեն՝ պատճենման իրավունք) գլխավորապես վերաբերում է այն գործողություններին, որոնք կարող են իրականացվել միայն գրական եւ զեղարվեստական ստեղծագործությունների հեղինակների կողմից կամ նրանց թույլտվությամբ: Այդպիսի գործողություն է ստեղծագործությունների պատճենումը: «Հեղինակի իրավունք» արտահայտությունը վերաբերում է զեղարվեստական գործեր ստեղծողին, այսինքն՝ հեղինակին: Սա նշանակում է, որ երկրների օրենքներում մեծամասամբ ճանաչված է այն փաստը, որ հեղինակն ունի որոշակի, հատուկ իրավունքներ իր ստեղծագործությունների նկատմամբ, որոնք միայն նա կարող է իրականացնել (օրինակ՝ արգելել աղավաղված վերարտադրությունը): Այլ իրավունքները, հատկապես պատճենման իրավունքը, կարող են իրականացվել այլ

անձանց, օրինակ՝ հրատարակչի կողմից, որը իր հերթին հեղինակից ստացել է համապատասխան լիցենզիա:

Զնայած, որ գոյություն ունեն մտավոր սեփականության այլ տեսակներ, սույն գրքույկի նպատակներից ելնելով օգտակար կլինի գյուտերի եւ գրական ու զեղարվեստական ստեղծագործությունների հիմնական առանձնահատկությունների տեսանկյունից մանրամասն վերլուծել արդյունաբերական սեփականության եւ հեղինակային իրավունքի տարբերությունը:

Ոչ իրավական իմաստով գյուտերը կարող են համարվել տեխնիկական խնդիրների նոր լուծումներ: Այս նոր լուծումներն իրենցից ներկայացնում են **գաղափարներ** եւ որպես այդպիսիք պահպանվում են արտոնագրային իրավունքով: Գյուտի պահպանությունը չի պահանջում, որ տվյալ գյուտը ներկայացվի նյութականացված ձևով: Գյուտարարի կարծիքով, այդ պահպանությունը նշանակում է, որ գյուտի ցանկացած օգտագործումը չի կարող իրականացվել առանց իրավատիրոջ համաձայնության: Նույնիսկ, եթե հետագայում որեւէ անձ, ով, անկախ ամեն ինչից, ավելի ուշ, առանց կրկնօրինակելու եւ չիմանալով առաջնություն ունեցող առաջին գյուտարարի աշխատանքի մասին, ստեղծել է նմանատիպ գյուտ, այնուամենայնիվ, իր գյուտն օգտագործելու համար պետք է թույլտվություն ստանա:

Ի տարբերություն գյուտերի պահպանության, հեղինակային իրավունքը պահպանում է միայն **գաղափարների արտահայտման ձևը**, ոչ թե ինքնին գաղափարը: Զեղինակային իրավունքով պահպանվում է բառերի ընտրության, երաժշտական նոտաների, գույների ու ձևերի համապատասխան դասավորվածության ստեղծագործական աշխատանքը: Այսպիսով, հեղինակային իրավունքը պահպանում է իրավատիրոջ զույքային իրավունքները նրանցից, ովքեր կրկնօրինակում կամ այլ կերպ օգտագործում են հեղինակի՝ բնօրինակ ստեղծագործությունը **արտահայտելու ձևը**:

Գյուտերի եւ զեղարվեստական ստեղծագործությունների միջեւ առկա այս հիմնական տարբերությամբ էլ պայմանավորված է նրանց տրամադրվող իրավական պահպանության տարբերությունը: Քանի որ գյուտերի պահպանությունը նախատեսում է գաղափարն օգտագործելու մենաշնորհային իրավունք, ուստի դրա պահպանության ժամկետը սահմանափակ է եւ, որպես կանոն, տևում է 20 տարի: Այն փաստը, որ գյուտը պահպանվում է, պետք է հայտնի լինի հանրությանը: Անհրաժեշտ է պաշտոնապես ծանուցել, որ ամբողջությամբ նկարագրված տվյալ գյուտը սահմանված տարիների ընթացքում պատկանում է կոմերտ իրավատիրոջը, այլ խոսքով՝ պահպանության արժանացած գյուտը պետք է գրանցվի պաշտոնական գրանցամատյանում եւ մատչելի դառնա հանրությանը:

Ի տարբերություն գյուտերի պահպանության, գրական եւ զեղարվեստական ստեղծագործությունների հեղինակային իրավունքով իրավական պահպանությունն արգելում է միայն գաղափարի արտահայտման ձևի անօրինական օգտագործումը, հետևաբար, այս դեպքում, պահպանության տեւողությունը կարող է ավելի երկար լինել, քան բուն գաղափարի պահպանությունը՝ առանց վնասելու հանրության շահերը: Բացի դրանից, օրենքը կարող է կրել, եւ շատ երկրներում կրում է դեկլարատիվ բնույթ, այսինքն, օրենքը կարող է պահանջել, որ յուրաքանչյուր ստեղծագործության հեղինակ իրավասու լինի արգելելու այլ անձանց կողմից իր ստեղծագործության կրկնօրինակումը կամ այլ ձևով օգտագործումը: Այսպիսով, ստեղծագործությունը համարվում է պահպանված ստեղծման պահից, ընդ որում, հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործության պետական գրանցում չի պահանջվում:



## Յեղիմակային իրավունքով պահպանվող ստեղծագործություններ

Յեղիմակային իրավունքով պահպանվող «գրական եւ գեղարվեստական ստեղծագործություններ»-ի տակ հասկանում ենք ցանկացած հեղինակի յուրօրինակ ստեղծագործություն, անկախ նրա գրական կամ գեղարվեստական արժանիքներից: Պարտադիր չէ, որ ստեղծագործության գաղափարը լինի յուրօրինակ, բայց արտահայտման ձևը պարտադիր պետք է լինի հեղինակի ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք: *Գրական եւ գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի* 2-րդ հոդվածի համաձայն «գրական եւ գեղարվեստական ստեղծագործություններ» արտահայտությունը ներառում է գրականության, գիտության ու արվեստի ոլորտներում ցանկացած արտադրանք, անկախ դրանց արտահայտման ձևից ու եղանակից»: Կոնվենցիան թվարկում է այդ ստեղծագործությունները՝

- գրքեր, բրոշյուրներ եւ գրավոր այլ ստեղծագործություններ,
- դասախոսություններ, ուղերձներ, քարոզներ,
- դրամատիկական կամ երաժշտադրամատիկական ստեղծագործություններ,
- պարարվեստի եւ մնջախաղի ստեղծագործություններ,
- տեքստով կամ առանց տեքստի երաժշտական ստեղծագործություններ,
- կինեմատոգրաֆիական ստեղծագործություններ եւ նման եղանակով ստեղծված ստեղծագործություններ, որոնք կարող են դիտվել եւ համարվել համարժեք կինեմատոգրաֆիական ստեղծագործություններին,
- գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի, լիտոգրաֆիայի, դիզայնի եւ կերպարվեստի այլ ստեղծագործություններ,
- լուսանկարչական եւ նման եղանակով ստեղծված ստեղծագործություններ, որոնք կարող են դիտվել եւ համարվել համարժեք լուսանկարչական ստեղծագործություններին,
- դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններ, նկարագրողներ, քարտեզներ, մախագծեր, էսքիզներ, եռաչափ ծավալ ունեցող ստեղծագործություններ, որոնք վերաբերում են աշխարհագրությանը, տոպոգրաֆիային, ճարտարապետությանը եւ այլ գիտություններին,
- թարգմանություններ, ադապտացիաներ, երաժշտական փոխադրումներ եւ գրական կամ գեղարվեստական ստեղծագործությունների այլ վերափոխումներ, որոնք պահպանվում են որպես բնօրինակ ստեղծագործություններ,
- գրական կամ գեղարվեստական ստեղծագործությունների ժողովածուներ, ինչպիսիք են հանրագիտարանները, անթոլոգիաները, որոնց բովանդակության ընտրությունն ու տեղաբաշխումը ստեղծագործական աշխատանքի արդյունք է, պահպանվում են օրենքով որպես ինքնուրույն ստեղծագործություններ, առանց վնաս պատճառելու ժողովածուների մաս հանդիսացող յուրաքանչյուր բնօրինակ ստեղծագործության հեղինակին:

Բեռնի կոնվենցիայի անդամ-երկրներն ու բազմաթիվ այլ երկրներ, վերոհիշյալ կատեգորիաների ստեղծագործություններին պահպանություն են տրամադրում իրենց երկրների հեղինակային իրավունքի մասին օրենսդրության համապատասխան: Սակայն այս ցանկը չի կարելի սպառիչ համարել: Յեղիմակային իրավունքով պահպանվում են նաեւ այլ եղանակով կամ ձևով ստեղծված գրականության, գիտության եւ արվեստի ոլորտների ստեղծագործությունները, որոնք ընդգրկված չեն վերը նշված ցանկում:

**Համակարգչային ծրագրերը** ստեղծագործությունների այդ կատեգորիաների լավ օրինակ են, քանի որ ընդգրկված չեն *Բեռնի կոնվենցիայում* թվարկված ստեղծագործությունների ցանկում, բայց 2-րդ հոդվածի համաձայն, անկասկած, դասվում են

Պատկերացում հեղինակային իրավունքի մասին





գրականության, գիտության եւ արվեստի ոլորտների ստեղծագործությունների թվին: Իսկապես, համակարգչային ծրագրերը պահպանվում են մի շարք երկրներում հեղինակային իրավունքի մասին օրենսդրությամբ, ինչպես նաեւ *ՄՄՀԿ-ի հեղինակային իրավունքի մասին* (1996թ.) *պայմանագրով*: Համակարգչային ծրագրերն իրենցից ներկայացնում են հրահանգների մի հավաքածու, որը կարգավորում է համակարգչի գործողությունները՝ նպատակ ունենալով հատուկ քայլեր կատարել, օրինակ, տեղեկատվության պահպանության ու որոնման ծրագրային խնդիրներ լուծելու համար: Ծրագիրը գրվում է արտադրվում է մեկ կամ մի քանի հեղինակների կողմից, բայց նրա վերջնական «արտահայտման ձևը կամ միջոցը» կարող է ուղղակիորեն ընկալվել միայն մեքենայի (համակարգչի) միջոցով, ոչ թե մարդու կողմից:

**Մուլտիմեդիա արտադրանքը** նույնպես ստեղծագործությունների կատեգորիա է, որը տեղ չի գտել *Քեռնի կոնվենցիայում* նշված ցանկում, բայց, ցանկում անկասկած ներառվում է գրականության, գիտության եւ արվեստի ոլորտների ստեղծագործությունների թվում: Թեեւ չկա համապատասխան իրավական սահմանում, սակայն գոյություն ունի հասկացություն, ըստ որի հնչյունների, տեքստի եւ պատկերների թվայնացված արտահայտությունը, որը հասանելի է դառնում համակարգչային ծրագրի շնորհիվ, բավարար պայման է, որպեսզի մուլտիմեդիա արտադրանքը դառնա հեղինակային իրավունքի պահպանության առարկա:

**Պահպանվող իրավունքներ**

Ցանկացած սեփականության հիմնական սկզբունքն այն է, որ սեփականատերը կարող է այն օգտագործել ինչպես ցանկանա եւ ուրիշ ոչ ոք չի կարող օգտագործել նրա սեփականությունն առանց թույլտվության: Բայց սա չի նշանակում, իհարկե, որ նա կարող է օգտագործել իր սեփականությունն անկախ հասարակության այլ անդամների համար օրենքով նախատեսված իրավունքներից ու շահերից: Հենց այդպես էլ պահպանվող ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը տիրապետողը կարող է օգտագործել ստեղծագործությունն իր ցանկացած ձևով եւ արգելել երրորդ անձանց դրա օգտագործումն առանց իր թույլտվության: Ազգային օրենքներով պահպանվող ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը տիրապետողին տալիս է երրորդ անձանց կողմից ստեղծագործության օգտագործումը թույլատրելու բացառիկ իրավունք:

Հեղինակային իրավունքը բաղկացած է երկու տեսակ իրավունքներից՝  
 - գույքային իրավունքներ, որոնք իրավատիրոջը հնարավորություն են տալիս ֆինանսական օգուտ ստանալ իր ստեղծագործությունն այլ անձանց կողմից օգտագործելու դեպքում,  
 - անձնական ոչ գույքային իրավունքներ, որոնք հնարավորություն են տալիս հեղինակին որոշակի գործողություններ ձեռնարկել՝ պաշտպանելու իր եւ ստեղծագործության միջեւ անձնական կապերը:

Հեղինակային իրավունքի մասին օրենքներից շատերը սահմանում են, որ հեղինակը կամ հեղինակային իրավունքը տիրապետողն իրավունք ունի թույլ տալ կամ արգելել ստեղծագործության նկատմամբ որոշակի գործողությունների իրականացումը: Ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը տիրապետողը կարող է **թույլատրել կամ արգելել՝**

- դրա վերարտադրությունը տարբեր ձևերով, ներառյալ տպագիր հրատարակությունը կամ ձայնագրությունը,
- օրինակների տարածումը,
- դրա հրապարակային կատարումը,
- դրա հեռարձակումը կամ հանրությանը հաղորդումը,

- դրա թարգմանությունը այլ լեզուներով,
- դրա վերափոխումը, օրինակ՝ վեպի վերափոխումը կինոսցենարի:

Այս իրավունքները մանրամասն ներկայացվում են ստորև.

**Վերարտադրման, տարածման, վարձույթի և ներմուծման իրավունքներ.**

հեղինակային իրավունքի մասին օրենքով պահպանվող ամենափմնական իրավունքը իրավատիրոջ իրավունքն է՝ արգելել առանց իր թույլտվության այլ անձանց կողմից իր ստեղծագործության **վերարտադրումը**: Պահպանվող ստեղծագործությունը տարբեր ձևերով օգտագործելու իրավական հիմքը վերարտադրման գործողությունը հսկելու իրավունքն է, լինի դա հրատարակչի կողմից գրքի վերարտադրություն, թե՛ ձայնագրություն կամ արտադրողի կողմից երաժշտական ստեղծագործության կատարումներ պարունակող խտասկավառակների արտադրություն:

Վերարտադրման այս հիմնական իրավունքն ապահովելու համար ազգային օրենքներում նախատեսվել են նաև այլ իրավունքներ: Շատ օրենքներ ընդգրկում են ստեղծագործության օրինակների **տարածումը** թույլատրելու հատուկ իրավունք: Այնուհաստ է, որ վերարտադրության իրավունքը տնտեսապես արժեզրկված կլիներ, եթե հեղինակային իրավունքը տիրապետողը չկարողանար թույլատրել իր համաձայնությամբ պատրաստված օրինակների տարածումը: Տարածման իրավունքը, սովորաբար, դադարում է օրինակի առաջին վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման հետ: Սա նշանակում է, որ եթե , օրինակ, գրքի նկատմամբ հեղինակային իրավունքը տիրապետողը վաճառում կամ այլ ձևով փոխանցում է գրքի օրինակի նկատմամբ սեփականության իրավունքը, ապա այդ օրինակի սեփականատերը կարող է գիրքը տալ ուրիշի կամ նույնիսկ վերավաճառել առանց հեղինակային իրավունքը տիրապետողի հետագա թույլտվության:

Մյուս իրավունքը, որը զգալիորեն ճանաչված է և ընդգրկված է ՄՄԿ 3 հեղինակային իրավունքի մասին պայմանագրում, որոշ կատեգորիայի ստեղծագործությունների **վարձույթով տալը թույլատրելու** իրավունքն է, ինչպիսիք են, օրինակ՝ հնչյունագրերում ընդգրկված երաժշտական ստեղծագործությունները, տեսալսողական ստեղծագործությունները եւ համակարգչային ծրագրերը: Այս իրավունքն անհրաժեշտ է, որպեսզի հնարավոր լինի կանխել հեղինակային իրավունքի իրավատիրոջ վերարտադրման իրավունքի չարաշահումը, քանի որ տեխնիկական առաջընթացի շնորհիվ չափազանց հեշտացել է վարձույթի խանութ-սրահներից օգտվողների համար ստեղծագործությունների կրկնօրինակումը:

Եվ, վերջապես, հեղինակային իրավունքի մասին որոշ օրենքներ ընդգրկում են օրինակների **ներմուծումը** հսկելու իրավունքը, որն անհրաժեշտ է հեղինակային իրավունքի տարածքային բնույթի սկզբունքը պահպանելու նպատակով, այն է՝ հեղինակային իրավունքը տիրապետողի օրինական նյութական շահերը կարող են վտանգվել, եթե նա չկարողանա կիրարկել վերարտադրության եւ տարածման իրավունքները տարածքային սկզբունքի հիման վրա:

Ստեղծագործության վերարտադրման որոշ ձևեր շեղումներ են ընդհանուր կանոնից, քանի որ չեն պահանջում իրավատիրոջ թույլտվությունը: Այս շեղումները հայտնի են որպես իրավունքի սահմանափակումներ: Ներկայումս քննարկումների առարկա է հեղինակային իրավունքի մասին օրենքներում ավանդաբար գոյություն ունեցող իրավունքի սահմանափակման հատկապես մեկ ոլորտը, որը թույլ է տալիս անհատ անձանց պատրաստել ստեղծագործության եզակի օրինակ՝ մասնավոր, ամենական եւ ոչ առևտրային նպատակով օգտագործելու համար: Վերարտադրման իրավունքի

այդպիսի շարունակական սահմանափակման արդարացունը ներկայումս հարցականի տակ է, քանի որ թվային տեխնոլոգիաների զարգացումը լայն հնարավորություն է տալիս առանց թույլտվության արտադրելու ստեղծագործության բարձրորակ օրինակներ, որոնք արտաքուստ ոչնչով չեն տարբերվում բնօրինակից եւ, այդ իսկ պատճառով, զնելիս լիովին փոխարինում են օրինական արտադրանքին:

**Հրապարակային կատարման, հեռարձակման, հանրությանը հաղորդման եւ հանրությանը մատչելի դարձնելու իրավունքներ**

Ազգային շատ օրենքների համաձայն, **հրապարակային կատարման** իրավունքը ընդգրկում է ստեղծագործության ցանկացած կատարում այնպիսի վայրում, որտեղ հանրության անդամները ներկա են կամ կարող են ներկա գտնվել, կամ այնպիսի վայրերում, որոնց մուտքն ազատ չէ հանրության անդամների համար, սակայն որտեղ ներկա են զգալի թվով անձինք, ովքեր չեն պատկանում ընտանիքի անդամների կամ մտերիմների շրջանակին:

Հրապարակային կատարման իրավունքը հեղինակին կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջը իրավունք է վերապահում թույլատրելու ստեղծագործության հրապարակային կատարումը հանրության առջև, ինչպես, ասենք՝ պիեսի բեմադրությունը թատրոնում կամ սիմֆոնիայի կենդանի կատարումը համերգային դահլիճում: Հրապարակային կատարումը ընդգրկում է նաեւ ծայնագրության օգտագործմամբ կատարումը: Այսպիսով, երաժշտական ստեղծագործությունը համարվում է հրապարակայնորեն կատարված, եթե այդ ստեղծագործության ծայնագրությունը կամ հնչյունագիրը վերարտադրվում է ծայնաուժեղացուցիչ սարքերի միջոցով դիսկոտեկներում, ինքնաթիռներում կամ առևտրի սրահներում:

**Հեռարձակման իրավունքը** տարածվում է հաղորդալարով կամ առանց հաղորդալարի՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ արբանյակով հնչյունների կամ պատկերների տարածման վրա, որի նպատակն է այդ պատկերները կամ հնչյունները հասարակության անդամներին մատչելի դարձնելը: Երբ ստեղծագործությունը **հաղորդվում է հանրությանը**, ապա հաղորդալարով կամ առանց հաղորդալարի միջոցներով ազդանշան է տարածվում, որը կարող է ընդունվել միայն այն անձանց կողմից, ովքեր ունեն ստացված ազդանշանները ապակողմորելու սարքեր: Հանրությանը հաղորդման օրինակ է հանդիսանում մալուխային հաղորդումը:

Բեռնի կոնվենցիայի համաձայն, հեղինակները բացառիկ իրավունք ունեն թույլատրելու իրենց ստեղծագործությունների հրապարակային կատարումը, հեռարձակումը եւ հանրությանը հաղորդումը: Որոշ ազգային օրենքների համաձայն, հեղինակի կամ հեղինակային իրավունքի այլ իրավատիրոջ բացառիկ իրավունքը՝ թույլատրելու իրենց ստեղծագործության հեռարձակումը որոշակի հանգամանքներում, փոխարինվում է **արդարացի վարձատրություն** ստանալու իրավունքով, թեև հեռարձակման իրավունքի այսպիսի սահմանափակումը օրըստօրե ավելի քիչ է կիրարկվում:

Վերջին տարիներին հեռարձակման, հրապարակային կատարման եւ հանրությանը հաղորդման իրավունքները բազմաթիվ քննարկումների առարկա են եղել: Նորամոդ հարցեր են ծագում տեխնոլոգիական զարգացումների հետեւանցով, մասնավորապես՝ թվային տեխնոլոգիայի, որի շնորհիվ ներդրվեց ինտերակտիվ կապի համակարգը, երբ օգտագործողն ինքն է ընտրում, թե ինչ ստեղծագործություն ներբեռնի իր համակարգչի մեջ: Այսպիսի գործունեության նկատմամբ կիրարկվող իրավունքի վերաբերյալ կարծիքները բազմազան են: ՄՄՅԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագիրը (8-րդ հոդված) պարզաբանում է, որ այդպիսի գործունեությունը պետք է հեղինակի ստեղծագործությունը հանրությանը մատչելի դարձնելու բացառիկ իրավունքի առարկա



լինի այնպիսի եղանակով, «որ դրանք հասարակության անդամներին հասանելի լինեն անհատապես ընտրված ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ»: Ազգային այդ օրենքներում այս իրավունքն իրականացվում է որպես հանրությանը հաղորդման իրավունքի մաս, իսկ որոշ օրենքներում՝ որպես տարածման իրավունքի մաս:

**Թարգմանության եւ վերափոխման իրավունքներ**

Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործության թարգմանության կամ վերափոխման համար նույնպես պահանջվում է իրավատիրոջ թույլտվությունը: Թարգմանությունը ստեղծագործության արտահայտումն է՝ բնօրինակ լեզվից գատ ուրիշ լեզուներով: Իսկ վերափոխումն ասելով սովորաբար հասկանում ենք ստեղծագործության փոփոխությունը մեկ այլ ստեղծագործություն ստեղծելու նպատակով, օրինակ՝ վեպի վերափոխումը կինոսցենարի, կամ ստեղծագործության ձեւափոխումը օգտագործման տարբեր ձեւերին համապատասխան, օրինակ՝ բուհի ուսանողների համար գրված դասագրքի հարմարեցումը ավելի ցածր մակարդակի սովորողների համար:

Թարգմանությունն ու վերափոխությունը ինքնին պահպանվում են հեղինակային իրավունքով: Թարգմանությունը կամ վերափոխությունը հրատարակելու համար պետք է ձեռք բերել թե բնօրինակ ստեղծագործության հեղինակի, թե թարգմանության կամ վերափոխության հեղինակի թույլտվությունը:

Վերափոխման իրավունքի հարցերը բազմիցս քննարկվել են վերջին տարիներին՝ թվայնացված ստեղծագործությունների վերափոխման եւ հարմարեցման ընդլայնված հնարավորությունների պատճառով: Թվային տեխնոլոգիաների օգնությամբ օգտագործող կարող է չափազանց արագ եւ հեշտ փոփոխել տեքստը, հնչյունը կամ պատկերը: Քննարկումների նպատակն էր՝ հավասարակշռություն ստեղծել մի կողմից հեղինակի՝ ստեղծագործություններում կատարվելիք փոփոխությունները թույլատրելու միջոցով դրա ամբողջականությունը հսկելու իրավունքի եւ, մյուս կողմից օգտագործողների՝ փոփոխություններ կատարելու իրավունքի միջեւ, որոնք թվայնացված ստեղծագործությունների օգտագործման բնականոն գործընթացի մաս են հանդիսանում:

**Անձնական ոչ գույքային իրավունքներ**

Բեռնի կոնվենցիան (հոդված 6bis) պահանջում է, որ անդամ-երկրներն իրենց օրենքներում հեղինակների համար նախատեսեն հետեւյալ իրավունքները՝

ա) ստեղծագործության **հեղինակ ճանաչվելու** (հեղինակության իրավունք).

բ) ստեղծագործությունը հնարավոր աղավաղումներից, փոփոխություններից կամ հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու (**հեղինակի համբավի և արժանապատվության իրավունք**):

Այս իրավունքները հայտնի են որպես հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքներ: Կոնվենցիան սահմանում է, որ անձնական ոչ գույքային իրավունքները անկախ են հեղինակի գույքային իրավունքներից եւ, նույնիսկ գույքային իրավունքները զիջելուց հետո էլ, պատկանում են հեղինակին: Պետք է նշել, որ անձնական ոչ գույքային իրավունքները նախատեսվում են միայն անհատ հեղինակների համար: Օրինակ, եթե ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կարող են

պատկանել նաև կինոպրոդյուսերին կամ հրատարակչին, ապա անձնական ոչ գույքային իրավունքները պատկանում են միայն հեղինակին:

## **Իրավունքների սահմանափակումներ**

Առաջին սահմանափակումը **որոշակի կատեգորիաների ստեղծագործությունները** հեղինակային իրավունքի պահպանությունից բացառելն է: Որոշ երկրներում ստեղծագործությունները չեն կարող պահպանվել հեղինակային իրավունքով, եթե ամրագրված չեն նյութական կրիչի վրա: Օրինակ, պարարվեստի ստեղծագործությունը կարող է պահպանվել հեղինակային իրավունքով, եթե շարժումները նկարագրված են պարային պարտիտուրում կամ տեսագրված են ժապավենի վրա: Որոշ երկրներում էլ պահպանության ամարկա չեն օրենքների տեքստերը, դատական եւ վարչական որոշումները:

Սահմանափակումների երկրորդ կատեգորիան վերաբերում է ստեղծագործությունների օգտագործման հատուկ դեպքերին, որոնք, սովորաբար, իրականացվում են իրավատիրոջ թույլտվությամբ, սակայն օրենքով նախատեսված որոշ հանգամանքների դեպքում կարող են իրականացվել առանց թույլտվության: Գոյություն ունի այս կատեգորիայի սահմանափակումների երկու հիմնական տեսակ.

- ա) **ազատ օգտագործում**, որը իրավատիրոջը փոխհատուցում վճարելու որևէ պարտականություն չի նախատեսում ստեղծագործությունն ազատ, առանց իրավատիրոջ թույլտվության օգտագործելու համար եւ
- բ) **ոչ կամավոր լիցենզիաներ**, որոնք պարտադրում են, որ իրավատիրոջը փոխհատուցում վճարվի առանց թույլտվության օգտագործման համար:

Ազատ օգտագործման օրինակներ են՝

- պահպանվող ստեղծագործության քաղվածքների մեջբերումը (ցիտումը) մեջբերման նպատակն արդարացնող ծավալով՝ պարտադիր նշելով մեջբերման հեղինակի անունն ու սկզբնաղբյուրը,
- ստեղծագործությունների ու դրանց քաղվածքների օգտագործումը լուսաբանման նպատակով՝ ուսուցողական բնույթի հրատարակություններում,
- ստեղծագործությունների օգտագործումը տեղեկատվական նպատակներով:

**Ազատ օգտագործման նպատակով վերարտադրման** վերաբերյալ Բեռնի կոնվենցիայի 9(2) հոդվածը սահմանում է, որ անդամ երկրները կարող են նախատեսել ստեղծագործությունների ազատ վերարտադրման դեպքեր, եթե դրանք չեն հակասում ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին եւ չեն վնասում ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերը: Ինչպես արդեն նշվել է, շատ օրենքներ թույլ են տալիս ֆիզիկական անձանց վերարտադրել ստեղծագործությունը բացառապես իրենց **մասնավոր, անձնական եւ ոչ առևտրային** նպատակներով օգտագործելու համար: Այնուամենայնիվ, վերջին տարիներին թվային տեխնոլոգիաների միջոցով անձնական օգտագործման նպատակով ստեղծագործության հեշտացված եւ որակյալ կրկնօրինակումը նեղացրել է ազատ օգտագործումների շրջանակը, իսկ այդպիսի կրկնօրինակման հետեւանքով հեղինակի օրինական շահերը վնասելու համար նախատեսել է փոխհատուցման համակարգ:

Ի լրումն ազգային օրենքներով նախատեսված **ազատ օգտագործումների** հատուկ դեպքերի, որոշ երկրների օրենքներ նախատեսում են ստեղծագործության ազատ



օգտագործում առանց հեղինակի կամ իրավատիրոջ թույլտվության հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օգտագործման բնույթն ու նպատակը, արդյոք այն առևտրային նպատակ է հետապնդում, թե՛ ոչ, օգտագործված ստեղծագործության բնույթը, չափը/ծավալը, ամբողջական ստեղծագործության որ մասն է օգտագործվելու, ինչպես նաև այդ օգտագործման հնարավոր ազդեցությունը ստեղծագործության առևտրային հնարավոր արժեքի վրա:

**Ոչ կամավոր լիցենզիաները** թույլ են տալիս ստեղծագործություններն օգտագործել առանց իրավատիրոջ թույլտվության որոշակի համգամաքներին առկայության դեպքում, սակայն պահանջում են այդպիսի օգտագործման համար փոխհատուցում վճարել իրավատիրոջը: Այսպիսի լիցենզիաները կոչվում են **ոչ կամավոր**, որովհետև թույլատրված են օրենքով են չեն համարվում իրավատիրոջ որոշակի գործողություններ թույլատրելու բացառիկ իրավունքի կիրարկման արդյունք: Ոչ կամավոր լիցենզիաները սկսեցին տրվել, երբ ի հայտ եկավ ստեղծագործությունները նոր տեխնոլոգիաների միջոցով հանրությանը տարածելու հնարավորությունը եւ ազգային օրենսդիրները մտահոգվեցին, որ իրավատերերը կարող են կասեցնել նոր տեխնոլոգիաների զարգացումը, եթե հրաժարվեն թույլատրել իրենց ստեղծագործությունների օգտագործումը: Այդ էին հաստատում Բեռնի կոնվենցիայով նախատեսված երկու՝ ոչ կամավոր լիցենզիաները, որոնք թույլատրում են երաժշտական ստեղծագործությունների մեխանիկական վերարտադրությունը եւ հեռարձակումը: Ոչ կամավոր լիցենզիաների հիմնավորումը դեռևս քննարկումների առարկա է, թեև հիմա ստեղծագործություններն իրավատերերի թույլտվության հիման վրա հանրությանը մատչելի դարձնելու ավելի արդյունավետ տարբերակներ կան, ներառյալ՝ իրավունքների կոլեկտիվ կառավարման ձևերը:

**Յեղինակային իրավունքի գործողության ժամկետը**

Յեղինակային իրավունքը չի հարատևում անորոշ ժամանակով: Օրենքը նախատեսում է որոշակի ժամանակահատված, որի ընթացքում գործում են հեղինակի իրավունքները: Յեղինակային իրավունքի գործողության ժամկետը սկսվում է ստեղծագործության ստեղծման պահից կամ, ինչպես սահմանում են որոշ երկրների օրենքներ, ստեղծագործությունը նյութական տեսքով արտահայտելու պահից: Սովորաբար, հեղինակի մահից հետո այն շարունակում է գործել մի որոշ ժամանակ: Օրենքի այս դրույթի նպատակն է հնարավորություն տալ ժառանգներին՝ հեղինակի մահից հետո նյութական օգուտ ունենալ նրա ստեղծագործությունների օգտագործումից ստացված եկամուտներից:

Ինչպես Բեռնի կոնվենցիայի անդամ երկրներում, այնպես էլ մի շարք այլ երկրներում, ըստ հեղինակային իրավունքի մասին ազգային օրենքների՝ հեղինակային իրավունքը գործում է հեղինակի կյանքի ընթացքում եւ ոչ պակաս 50 տարի՝ նրա մահից հետո: Բացի այդ, Բեռնի կոնվենցիայով պահպանության ժամկետներ են սահմանվում անանուն կամ կեղծանունով հրատարակված և կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների համար, որոնց պահպանության ժամկետը հնարավոր չէ հաշվարկել՝ հիմք ընդունելով անհատ հեղինակի կյանքի տևողությունը: Մի շարք երկրներում հեղինակային իրավունքի գործողության ժամկետի երկարացման միտում է նկատվում: Եվրամիության երկրները, Ամերիկայի Միացյալ Նահանգները եւ մի շարք այլ երկրներ (այդ թվում Չայաստանի Հանրապետությունը) հեղինակային իրավունքի պահպանության հետմահու ժամկետը երկարաձգել են մինչև 70 տարի:

**Չեղինակային իրավունքի տիրապետումը, պաշտպանությունն ու փոխանցումը**

Սովորաբար, ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի սկզբնական տիրապետողն այն անձն է, ով ստեղծել է դա, այսինքն՝ հեղինակը: Սակայն ոչ բոլոր դեպքերում է այդպես: Բեռնի կոնվենցիայի 14bis հոդվածը սահմանում է, թե ում է պատկանում կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքը: Որոշ ազգային օրենքներ նույնպես պարունակում են դրույթներ, որոնց համաձայն, եթե ստեղծագործությունը ստեղծվել է հեղինակի կողմից որպես ծառայողական պարտավորություն, ապա ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները պատկանում են ոչ թե հեղինակին, այլ գործատուին, ում մոտ աշխատում է հեղինակը: Իսկ անձնական ոչ գույքային իրավունքները, ինչպես արդեն ասվել է, միշտ պատկանում են հեղինակին՝ անկախ նրանից, թե ով է տիրապետում ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները:

Շատ երկրների օրենքներ սահմանում են, որ ստեղծագործության նկատմամբ իրավունքների սկզբնական տիրապետողը կարող է իր բոլոր գույքային իրավունքները փոխանցել երրորդ անձի: (Անձնական իրավունքները, հենց հեղինակի անձից անբաժանելի լինելու փաստով երբեք չեն կարող փոխանցվել): Չեղինակը կարող է վաճառել ստեղծագործության նկատմամբ իր բոլոր իրավունքները՝ անհատի կամ կազմակերպության, որոնք ավելի լավ կկարողանան իրացնել ստեղծագործությունը վարձատրության դիմաց: Վարձատրությունը երբեմն կախված է ստեղծագործության փաստացի օգտագործումից, եւ այդպիսի դեպքերում կոչվում է **հոնորար**: Իրավունքների փոխանցումը կարող է կատարվել երկու ճանապարհով՝ գիջելու եւ լիցենզավորելու:

**Ձիջելու միջոցով** հեղինակային իրավունքը տիրապետողը ստեղծագործության նկատմամբ որեւէ գործողություն **թույլատրելու կամ արգելելու իր գույքային իրավունքը** փոխանցում է այլ անձի: Ձիջումը սեփականության իրավունքի փոխանցում է: Այդ պատճառով, այն անձը, ում գիջվել են բոլոր իրավունքները, դառնում է ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների մոր տիրապետողը, սեփականատերը:

Որոշ երկրներում հեղինակի գույքային իրավունքների գիջում օրենքով նախատեսված չէ, թույլատրվում է միայն իրավունքների օգտագործման **լիցենզավորում**: Օգտագործման լիցենզիա տալ նշանակում է, որ հեղինակային իրավունքը տիրապետողը պահպանում է ստեղծագործության նկատմամբ իր իրավունքները, բայց թույլ է տալիս երրորդ անձանց իրականացնել իր գույքային իրավունքների շրջանակում նախատեսված որոշ գործողություններ, սովորաբար, որոշակի ժամկետում եւ որոշակի նպատակով: Օրինակ, վեպի հեղինակը կարող է վեպի օրինակները պատրաստելու եւ տարածելու լիցենզիա տալ իրատարակչին: Միաժամանակ, հեղինակը կարող է ֆիլմի պրոդյուսերին վեպի հիման վրա ֆիլմ ստեղծելու լիցենզիա տալ: Լիցենզիաները կարող են լինել բացառիկ, երբ հեղինակային իրավունքը տիրապետողը համաձայնում է լիցենզավորված գործողություններ կատարելու թույլտվություն չտալ այլ անձանց, եւ ոչ բացառիկ, երբ հեղինակային իրավունքը տիրապետողը կարող է նաեւ այլ անձանց թույլտվություն տալ՝ իրականացնելու նույն գործողությունները: Ի տարբերություն գիջման, լիցենզիայի դեպքում, որպես կանոն, որեւէ գործողություն արգելելու կամ թույլ տալու գույքային իրավունքը չի փոխանցվում այլ անձանց:



Լիցենզավորումը կարող է իրականացվել նաև **իրավունքների կոլեկտիվ կառավարման ձևով**: Կոլեկտիվ կառավարման ներքո հեղինակները եւ գույքային իրավունքների այլ տիրապետողները բացառիկ լիցենզիա են տալիս մեկ կազմակերպության, որը գործում է նրանց անունից՝ թույլտվություն է տալիս, հոնորարներ հավաքում եւ բաշխում, կանխում եւ բացահայտում է իրավախախտումները, ձեռնարկում եւ իրականացնում պաշտպանության միջոցներ: Յեղինակների տեսանկյունից, կոլեկտիվ կառավարման առավելությունն այն է, որ երբ նոր տեխնոլոգիաների շնորհիվ առկա են ստեղծագործությունների անօրինական օգտագործման բազմաթիվ դեպքեր, մեկ կազմակերպությունը կարող է ապահովել, որ մասսայական օգտագործումներն իրականացվեն թույլտվությունների հիման վրա , որոնք առանց դժվարության, հեշտությամբ կարելի է ձեռք բերել կենտրոնացված աղբյուրից:

Իրավատերը կարող է նաև **իրաժարվել իր գույքային իրավունքները մասամբ կամ ամբողջությամբ կիրարկելուց**: Իրավատերը կարող է, օրինակ, տեղադրել իր ստեղծագործությունը ինտերնետում, որպեսզի ցանկացած անձ կարողանա ազատ օգտագործել այն, կամ իր գույքային իրավունքների կիրարկումից հրաժարվելը սահմանափակել միայն ոչ առեւտրային նպատակով օգտագործմամբ: Համագործակցության ուշագրավ շատ ծրագրեր կան ըստ հետեւյալ մոդելի, որտեղ ստեղծագործողները իրաժարվում են իրենց որոշակի իրավունքներից, ինչպես նկարագրված է ծրագրի հիմքում ընկած լիցենզային պայմանագրի պայմաններում, օրինակ Հանրային ընդհանուր լիցենզիան (General Public License-GPL): Ըստ այդ լիցենզիայի, նրանք թույլ են տալիս ազատ օգտագործել եւ փոփոխել իրենց ստեղծագործական ներդրումները պայմանով, որ հետագա օգտագործողները նույնպես հավատարիմ մնան լիցենզիայի պայմաններին: Այսպիսի նախագծեր նախաձեռնողները, ներառյալ՝ *ազատ ձեռքբերման աղբյուրներ* շարժման մասնակիցները, ովքեր մասնագիտացված են համակարգչային ծրագրերի մշակմամբ, նույնպես ստեղծում են իրենց բիզնես մոդելը՝ ելնելով հեղինակային իրավունքի գոյություն ունեցող պահպանության փաստից, քանի որ, հակառակ դեպքում, նրանք չեն կարողանա պարտավորություններ սահմանել հետագա օգտագործողների նկատմամբ:

**Իրավունքների պաշտպանությունը**

*Բեռնի կոնվենցիան* իրավունքների պաշտպանությանը վերաբերող շատ քիչ դրույթներ է պարունակում, սակայն վերջին տարիներին պաշտպանության ազգային եւ միջազգային նոր չափանիշներ սահմանելու ակտիվ գործընթաց է ծավալվում, որը պայմանավորված է երկու հիմնական գործոնով: Առաջինը պահպանվող նյութերի (թույլատրված եւ չթույլատրված) ստեղծմանն ու օգտագործմանը վերաբերող տեխնոլոգիական/տեխնիկական միջոցների կատարելագործումն է: Օրինակ, թվային տեխնոլոգիաները թույլ են տալիս հեշտությամբ տեղափոխել եւ գերազանց կրկնօրինակել ցանկացած թվայնացված տեղեկատվություն, ներառյալ՝ հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունները: Երկրորդ գործոնը միջազգային առեւտրի ոլորտում մտավոր սեփականության իրավունքներով պաշտպանված ապրանքների ու ծառայությունների շրջանառության աճող տնտեսական նշանակությունն է: Այլ կերպ ասած, մտավոր սեփականության իրավունքներ պարունակող արտադրանքի առեւտուրը ամբողջ աշխարհում չափազանց շահութաբեր գործունեություն է: Դա հաստատվում է նաև ՄՄՀԿ հեղինակային իրավունքի մասին պայմանագրով (WCT), որն անդամ-պետություններից պահանջում է իրենց ազգային օրենսդրություններով ապահովել պատշաճ իրավական պահպանություն եւ իրավական



պաշտպանության արդյունավետ միջոցներ՝ պայմանագրով նախատեսված իրավունքների ցանկացած խախտման դեմ, ներառյալ հետագա խախտումների կանխման կամ բացահայտման միջոցները:

*Ստավոր սեփականության առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրը (TRIPS)*, պարունակում է իրավունքների պաշտպանությանը վերաբերող մանրամասն դրույթներ եւ մտավոր սեփականության ու առևտրի միջուկ առկա նոր կապի բավարար ապացույց է: Հաջորդ պարբերությունները սահմանում են ամփոփում են պաշտպանության վերաբերյալ որոշ դրույթներ, որոնք ընդգրկված են վերջին ժամանակներս ընդունված ազգային օրենսդրություններում: Դրանք կարող են բաժանվել հետևյալ խմբերի. պաշտպանական կամ նախնական միջոցներ, պաշտպանության քաղաքացիա-իրավական միջոցներ, քրեական պատժամիջոցներ, սահմանի վրա ձեռնարկվող միջոցներ եւ տեխնիկական պաշտպանիչ սարքերի կիրառումը շրջանցող գործողությունների դեմ ուղղված միջոցներ, միջոցառումներ ու պատժամիջոցներ:

**Պաշտպանական կամ նախնական միջոցները** երկու նպատակ ունեն. նախ կանխել խախտում պարունակող գործողությունները, մասնավորապես՝ կանխել անօրինական ապրանքների մուտքն առևտրային ուղիներ, ներառյալ ներկրված ապրանքների մուտքը մաքսագերծումից հետո, երկրորդ՝ պահպանել ենթադրվող իրավախախտմանը վերաբերող համապատասխան ապացույցները: Այսպիսով, իրավապահ մարմինները իրավասու կլինեն կարգադրելու, որ նախնական միջոցներ ձեռնարկվեն նախքան ենթադրվող իրավախախտման մասին հայտարարություն տալը: Այս դեպքում ենթադրյալ խախտողը զրկվում է ապրանքն այլ տեղ տեղափոխելու հնարավորությունից՝ բացահայտումից խուսափելու նպատակով: Անենատարածված նախնական միջոցը ենթադրյալ խախտողի տարածքները որոնել-գտնելն է ու կասկածյալ խախտում պարունակող ապրանքի, դրա պատրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների, ինչպես նաեւ բոլոր փաստաթղթերի ու գրանցամատյանների բռնագրավումը, որոնք առնչվում են ենթադրվող խախտում պարունակող գործունեությանը:

**Պաշտպանության քաղաքացիա-իրավական միջոցները** հատուցում են խախտման հետեւանքով իրավաստիրոջը պատճառված վնասները, սովորաբար՝ դրամական տեսքով, եւ հետագա խախտումները կանխելու արդյունավետ միջոցներ են: Դա սովորաբար իրականացվում է ապօրինի պատրաստման համար օգտագործվող նյութերն ու սարքավորումները բռնագրավելու կամ ոչնչացնելու վերաբերյալ կայացված դատավճռի միջոցով: Եթե վտանգ կա, որ խախտում պարունակող գործողությունները կարող են շարունակվել, դատարանը կարող է նաեւ արգելանք դնել այդպիսի գործողությունների վրա, որը չկատարելու դեպքում իրավախախտողը պարտավորված կլինի տուգանքներ վճարել:

**Քրեական պատժամիջոցները, ինչպես պաշտպանության քաղաքացիա-իրավական միջոցները**, նախատեսված են **պատժելու** բոլոր նրանց, ովքեր գիտակցաբար են առևտրային նպատակով անօրինական գործողություններ են իրականացնում, եւ **կանխելու** նրանց կողմից կատարվելիք հետագա խախտումները: Որպես պատժամիջոց կիրառվում են զգալի տուգանքներ եւ ազատազրկում, որոնք համարժեք են այլ լուրջ հանցանքների համար կիրառվող տուգանքների ու ազատազրկման չափերին, մասնավորապես՝ կրկնվող արարքների համար: Իրավախախտումները կանխող միջոց կարող են հանդիսանալ մեծանակված օրինակների, դրանք պատրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների բռնագրավման եւ ոչնչացման վերաբերյալ որոշումները:

Պատկերացում հեղինակային իրավունքի մասին



**Սահմանի վրա ձեռնարկվող միջոցները** տարբերվում են մինչ հիմա նկարագրված պաշտպանության միջոցներից նրանով, որ դրանք ոչ թե իրավապահ, այլ մաքսային մարմինների կողմից ձեռնարկվող գործողություններ են: Սահմանի վրա ձեռնարկվող միջոցները իրավատերերին թույլ են տալիս մաքսային մարմիններ դիմել՝ կասեցնելու ենթադրյալ հեղինակային իրավունքի խախտում պարունակող ապրանքների մուտքն առևտրային ցանց: Սրա նպատակն է ողջամիտ ժամանակ տալ իրավատերերին՝ իրավախախտողի դեմ իրավական գործընթաց սկսելու համար, առանց վախճնալու, որ ենթադրվող խախտում պարունակող իրերը մաքսային պարզաբանումներից/մաքսագերծումից հետո շրջանառությունից կանհետանան: Իրավատերը պետք է ա) մաքսային մարմինն ապացուցի, որ կա իրավունքների խախտման ակնհայտ ապացույց, բ) ապահովի ապրանքների մանրամասն նկարագիրը, որպեսզի դրանք ճանաչելի լինեն մաքսային մարմինների համար, գ) երաշխիքներ ապահովի ներկրողի, ապրանքների սեփականատիրոջ եւ մաքսային մարմինների համար՝ հատուցելու ապրանքների բացթողումը կասեցնելու հետ կապված մաքսային մարմինների ծախսերը, եթե հետագայում չհաստատվի իրավախախտման փաստը:

Իրավունքների պաշտպանության մասին վերջին դրույթը, որի կարելիությունը պայմանավորված է թվային տեխնոլոգիաների մուտքով, ներառում է **տեխնիկական միջոցների շրջանցումների դեմ միջոցները, միջոցառումներն ու պատժամիջոցները**: Որոշ դեպքերում պատճենումը կանխող միակ գործնական միջոցը, այսպես կոչված, կրկնօրինակումն արգելող համակարգերի կիրառումն է: Այդ նպատակով օգտագործվող տեխնիկական սարքերը կամ հիմնովին կանխում են կրկնօրինակումը կամ օրինակների որակն այնքան են ցածրացնում, որ օգտագործման համար այլևս պիտանի չլինեն: Տեխնիկական միջոցները օգտագործվում են նաեւ կանխելու՝ կողավորված առևտրային հաղորդումների ընդունումն առանց կողավերծանիչ սարքերի: Այնուամենայնիվ, տեխնիկական տեսակետից հնարավոր է արտադրել կրկնօրինակումից պաշտպանող կամ կողավերծանիչ համակարգերը շրջանցող սարքավորումներ: Պաշտպանության դրույթները նպատակ ունեն կանխելու այդպիսի սարքերի կամ սարքավորումների արտադրությունը, ներկրումը եւ տարածումը: Այդ գործողությունների վերաբերյալ դրույթներ ընդգրկված են ՄՍՀԿ Յեղիճակային իրավունքի մասին պայմանագրում, ինչպես նաեւ դրույթներ՝ կանխելու իրավունքների կառավարման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվության չթույլատրված վերացումը, փոփոխությունը եւ ստեղծագործության այն օրինակների տարածումը, որոնց վրա *իրավունքների կառավարման վերաբերյալ էլեկտրոնային այդ տեղեկատվությունը վերացվել կամ փոփոխվել է առանց թույլտվության*: Այդ տեղեկատվությունը նույնականացնում է հեղինակին կամ իրավունքը տիրապետող անձին, կամ կարող է պարունակել տեղեկատվություն ստեղծագործության օգտագործման պայմանների և ժամկետների մասին: Իրավունքների կառավարման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվության չթույլատրված վերացումը, փոփոխությունը կարող է հանգեցնել իրավունքների կառավարման կամ վարձատրության բաշխման կոմպյուտերացված համակարգերի խեղաթյուրման:

**Չարակից իրավունքներ**

Չարակից իրավունքների նպատակն է պաշտպանել որոշակի ֆիզիկական եւ իրավաբանական անձանց օրինական շահերը, ում ներդրումների ու ջանքերի շնորհիվ ստեղծագործությունը հասանելի է դարձել հանրությանը, կամ ովքեր ստեղծել են օբյեկտներ, որոնք «ստեղծագործություններ» չեն, բայց պարունակում են բավարար ստեղծագործական կամ տեխնիկական եւ կազմակերպչական հմտություններ՝ հիմք

տալով ճանաչելու նրանց սեփականության իրավունքն այդ օբյեկտների նկատմամբ: Հարակից իրավունքների մասին օրենքի համաձայն այդ անձանց կամ կազմակերպությունների գործունեության շնորհիվ ստեղծված օբյեկտներն արժանի են օրինական պաշտպանության նույնչափ, որչափ հեղինակի ստեղծագործական աշխատանքի շնորհիվ ստեղծված արդյունքները: Որոշ օրենքներ պարզաբանում են, որ հարակից իրավունքների կիրարկումը ոչ մի ձևով չպետք է վնաս հասցնի հեղինակի իրավունքների պաշտպանությանը:

Սովորաբար, հարակից իրավունքների **սուբյեկտներ** են համարվում

- կատարողները
- հնչյունագրեր արտադրողները
- հեռարձակող կազմակերպությունները:

Կատարողների իրավունքները ճանաչվում են, քանի որ նրանց ստեղծագործական միջամտությունն անհրաժեշտ է, օրինակ՝ ֆիլմին կամ երաժշտական, դրամատիկական եւ պարարվեստի ստեղծագործություններին կյանք հաղորդելու համար, եւ որովհետեւ կատարողները արդարացիորեն շահագրգռված են, որ իրենց կատարումներն օրինական պաշտպանված լինեն:

Հնչյունագրեր արտադրողների իրավունքները ճանաչվում են, որովհետեւ նրանց ստեղծագործական, ֆինանսական եւ կազմակերպչական հմտություններն անհրաժեշտ են իրենց ձայնագրությունները առեւտրային նպատակով արտադրված հնչյունագրերի տեսքով հանրությանը հասանելի դարձնելու համար, եւ որովհետեւ նրանք արդարացիորեն շահագրգռված են իրավական միջոցներ ձեռնարկել իրենց հնչյունագրերի անօրինական օգտագործումների դեմ, լինի դա իրենց հնչյունագրերի չթույլատրված օրինակների պատրաստում ու տարածում (պատճենահեռություն) կամ չթույլատրված հեռարձակում ու հանրությանը հաղորդում:

Ճիշտ նույն ձևով էլ ճանաչվում են հեռարձակող կազմակերպությունների իրավունքները, հաշվի առնելով այն դերը, որ նրանք ունեն ստեղծագործությունները հանրությանը մատչելի դարձնելու գործում եւ շահագրգռվածությունը օրինական ձևով հսկելու իրենց հաղորդումների հեռարձակումն ու վերահեռարձակումը:

**Միջազգային պայմանագրեր**

Հարակից իրավունքներից օգտվող նշված երեք կատեգորիաների իրավունքները միջազգային ասպարեզում պաշտպանելու անհրաժեշտության արձագանքը եղավ 1961թ. Հռոմում ստորագրված՝ կատարողների, հնչյունագրեր արտադրողների եւ հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության միջազգային կոնվենցիան (Հռոմի կոնվենցիա): Հռոմի կոնվենցիան մի փորձ էր միջազգային կանոնակարգ մտցնել մի այնպիսի նոր դաշտում, որը դեռեւս շատ քիչ էր կարգավորված ազգային օրենքներով: Սա նշանակում էր, որ շատ երկրներ, նախքան կոնվենցիային անդամակցելը, պետք է նախապես համապատասխանեցնեին իրենց օրենքները կոնվենցիայի դրույթներին:

Այսօր անհրաժեշտություն է զգացվում արդիականացնել կոնվենցիայի դրույթները, թեւս դրանց հիման վրա են TRIPS Համաձայնագրում ընդգրկվել կատարողների, հնչյունագրեր արտադրողների ու հեռարձակող կազմակերպությունների վերաբերյալ դրույթները (պահպանության մակարդակը նման է, բայց ոչ՝ նույնը): Կատարողների եւ հնչյունագրեր արտադրողների իրավունքների արդիականացված պահպանություն նախատեսված է ՄՄՅԿ Կատարումների եւ հնչյունագրերի մասին պայմանագրում (ԿՊՊ), որը ՄՄՅԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրի հետ միասին ընդունվել է 1996 թվականին: ՄՄՅԿ-ում շարունակվում են աշխատանքները



հեռարձակող կազմակերպությունների իրավունքներից վերաբերող նոր պայմանագրի վրա:

Ազգային օրենքներով հարակից իրավունքների այս երեք սուբյեկտներին **տրված իրավունքները** հետևյալն են, թեև պարտադիր չէ, որ այդ իրավունքները նախատեսվեն նույն օրենքով .

- **Կատարողներն** իրավունք ունեն արգելել առանց իրենց թույլտվության ամրագրելու, հեռարձակելու կամ հանրությանը հաղորդելու իրենց կենդանի կատարումը, ինչպես նաև վերարտադրել իրենց ամրագրված կատարումները որոշակի հանգամանքներում: Հեռարձակման եւ հանրությանը հաղորդման իրավունքները կարող են իրականացվել ոչ թե արգելելու, այլ, պարզապես, արդարացի վարձատրություն ստանալու պայմանով: Քանի որ կատարումները սերտորեն կապակցված են կատարողի անձի հետ, որոշ ազգային օրենքներ կատարողների համար նախատեսում են նաև անձնական ոչ գույքային իրավունքներ: Այս իրավունքի հիման վրա կատարողն իրավասու է արգելելու առանց իր թույլտվության իր անվան կամ պատկերի օգտագործումը կամ կատարման մեջ փոփոխություններ կատարելը, որը կարող է վնաս հասցնել նրա համբավին կամ արժանապատվությանը:
- **Հնչյունագրեր արտադրողներն** իրավունք ունեն թույլատրելու կամ արգելելու իրենց հնչյունագրերի բնօրինակի կամ օրինակների վերարտադրումը, ներմուծումն ու տարածումը, ինչպես նաև վարձատրություն ստանալ իրենց հնչյունագրերը հեռարձակելու կամ հանրությանը հաղորդելու համար:
- **Հեռարձակող կազմակերպություններն** իրավունք ունեն թույլատրելու կամ արգելելու իրենց հաղորդումների վերահեռարձակումը, ամրագրումը եւ վերարտադրումը:

Որոշ երկրների օրենքներ նախատեսում են նաև լրացուցիչ իրավունքներ: Օրինակ՝ շատ երկրներում հնչյունագրեր արտադրողները եւ կատարողները օգտվում են իրենց հնչյունագրերը ( նաև տեսալսողական ստեղծագործությունները՝ դերակատարների առումով) վարձույթով տալու իրավունքից, որոշ երկրներում էլ հատուկ իրավունքներ են նախատեսվում մալուխային հաղորդումների նկատմամբ: ՄՍՀԿ Կատարումների եւ հնչյունագրերի մասին պայմանագրով նախատեսված է նաև հնչյունագրեր արտադրողների համար (ինչպես նաև ազգային օրենքներով մյուս իրավատերերի համար) վարձույթով հանձնելու իրավունք:

Ինչպես հեղինակային իրավունքի, այնպես էլ հարակից իրավունքների համար Հռոմի կոնվենցիան եւ ազգային օրենքները նախատեսում են մի շարք սահմանափակումներ: Այս սահմանափակումները թույլ են տալիս պահպանվող կատարումները, հնչյունագրերը եւ հաղորդումներն օգտագործել ուսուցողական, գիտահետազոտական, անձնական օգտագործման, քաղվածքների մեջբերումների եւ տեղեկատվության մատակերպելով: Շատ երկրներ իրենց օրենքներում հարակից իրավունքների նկատմամբ նախատեսում են նույն **սահմանափակումները**, ինչ նախատեսված է հեղինակային իրավունքի համար, ներառյալ նաև հարկադիր պայմանագրեր կնքելու հնարավորությունը: Կատարումների եւ հնչյունագրերի մասին պայմանագրով, այնուամենայնիվ, այդպիսի սահմանափակումները թույլատրվում են միայն հատուկ դեպքերում, որոնք չեն հակասում հնչյունագրերում ամրագրված կատարումների բնականոն օգտագործման պահանջներին եւ չեն վնասում կատարողների կամ հնչյունագրեր արտադրողների օրինական շահերը:

Հռոմի կոնվենցիայով հարակից իրավունքների պահպանության ժամկետ սահմանված է 20 տարի այն տարվա ավարտից հետո, ա) երբ տեղի է ունեցել հնչյունագրերի եւ հնչյունագրերում ընդգրկված կատարումների ամրագրումը, բ) այն կատարումների կատարման պահից , որոնք ընդգրկված չեն հնչյունագրում, գ) հաղորդումների հեռարձակման պահից: TRIPS Համաձայնագրում, ինչպես նաեւ ՄՄՀԿ Կատարումների եւ հնչյունագրերի մասին պայմանագրում կատարողների եւ հնչյունագրեր արտադրողների իրավունքների պահպանության ժամկետը երկարաձգված է մինչև 50 տարի՝ կատարման ամրագրման պահից: TRIPS Համաձայնագրով հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության ժամկետ սահմանված է 20 տարի՝ հեռարձակման պահից: Սակայն, հարակից իրավունքների պահպանությունն ապահովող շատ երկրներ սահմանում են պահպանության ավելի երկար ժամկետ, քան նախատեսված է Հռոմի կոնվենցիայով:

Ինչ վերաբերում է **պաշտպանությանը**, հարակից իրավունքների ոլորտում խախտումներն ու անօրինակամտությունները եւ դրանց դեմ ձեռնարկվող միջոցառումները նույնն են, ինչ հեղինակային իրավունքների խախտումների դեպքում, մասնավորապես պաշտպանական կամ ժամանակավոր միջոցները՝ պաշտպանության քաղաքացիական միջոցներ, քրեական պատժամիջոցներ, սահմանի վրա ձեռնարկվող միջոցառումներ, ինչպես նաեւ միջոցառումներ, պաշտպանության միջոցներ եւ պատժամիջոցներ, որոնք կիրառվում են տեխնիկական միջոցների շրջանցումների եւ իրավունքների կառավարման տեղեկատվության վերացման դեմ:

Եւ, վերջապես, անհրաժեշտ է նշել հարակից իրավունքների պաշտպանության եւ **գարգացող երկրների** շահերի միջեւ կապը: Զարգացող երկրների մշակութային բազմաթիվ արտահայտություններ, որոնք ոչ ամրագրված են եւ ոչ էլ գրառված են հայտնի են որպես **բանահյուսություն կամ ավանդական մշակութային** արտահայտություններ, կարող են պահպանվել հարակից իրավունքներով որպես կատարումներ, քանի որ կատարողների միջոցով է, որ դրանք հասանելի են դառնում հասարակությանը: Հարակից իրավունքների պահպանության միջոցով է, որ գարգացող երկրները կարող են ապահովել նաեւ անտիկ աշխարհի մշակութային անգին արժեքները պահպանելու միջոցներ, քանի որ այդ արժեքների տւթյան շնորհիվ է, որ ազգային մշակույթները տարբերվում են իրարից: Հնչյունագրեր արտադրողների ու հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանությունը նպաստում է ազգային ինդուստրիայի կազմավորմանը, որի շնորհիվ հնարավոր է դառնում ազգային մշակույթի տարածումը երկրում եւ, որ ավելի կարելոր է, արտաքին շուկա արտահանումը: Ներկայումս ամբողջ աշխարհում երաժշտության լայն տարածման փաստը հաստատում է, որ կա այդպիսի շուկա: Բայց ոչ միշտ են այդ տարածումից առաջացող եկամուտները վերադառնում այն երկիր, որտեղ ստեղծվել են այդ մշակութային արժեքները: Ամփոփելով նշենք, որ հարակից իրավունքների պահպանությունը ծառայում է երկու նպատակի՝ պահպանել ազգային մշակույթը եւ միջոցներ ապահովել միջազգային շուկաներում առևտրային նպատակով օգտագործման համար:

Հարակից իրավունքների պահպանության գործում գարգացող երկրների շահերը էլ ավելի հեռուն են գնում՝ ազգային մշակույթը պահպանելուց գատ դեպի միջազգային առևտուր եւ գարգացում: Թե ներկայումս երկրներն ինչ չափով են պահպանում մտավոր սեփականության նկատմամբ իրավունքները, անբակտելիորեն կապված է այդ երկրի ներուժի հետ՝ նպատակ ունենալով օգուտներ քաղել այդպիսի իրավունքներով պահպանվող պարամետրերի ու ծառայությունների կտրուկ ընդարձակվող միջազգային առևտրից: Օրինակ, հեռահաղորդակցության եւ համակարգչային ինֆորմակառուցվածքների մերձեցումը հանգեցնում է գարգացող երկրների տնտեսության



տարբեր ճյուղերում, ներառյալ՝ մտավոր սեփականության ոլորտում միջազգային ներդրումների, իսկ այն երկրները, որոնք չեն իրականացնում մտավոր սեփականության պահպանության քաղաքականություն, դուրս են մնում այդ շրջանակից: Հարակից իրավունքների պահպանությունն անհրաժեշտ նախապայման է միջազգային առևտրի եւ ներդրումների զարգացող համակարգում, որը բնորոշ է XXI դարին:

## **Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ-ի) դերը**

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՄՀԿ) միջազգային կազմակերպություն է, որի գործունեությունը նվիրված է նորարարությունն ու ստեղծագործական աշխատանքը խթանելուն՝ ամբողջ աշխարհում ստեղծագործողների եւ մտավոր սեփականությունը տիրապետողների իրավունքները պաշտպանելու, ստեղծագործողների ու նորարարների ճանաչված լինելու եւ իրենց տաղանդի դիմաց վարձատրվելու միջոցով:

Որպես Միավորված ազգերի մասնագիտացված կազմակերպություն՝ ՄՄՀԿ-ն հանդիսանում է անդամ երկրների համար ֆորում, որի շրջանակում՝ ստեղծվում եւ ներդաշնակեցվում են մտավոր սեփականության իրավունքների պահպանության **կանոններն ու գործնական կիրարկումը**: Արդյունաբերորեն զարգացած շատ երկրներ ունեն մտավոր սեփականության պահպանության հարյուրամյա պատմություն: Նոր եւ զարգացող երկրները ներկայումս ստեղծում են իրենց գյուտերի, ապրանքային նշանների եւ հեղինակային իրավունքի համակարգերն ու օրենքները: Վերջին տասնամյակում առևտրի արագընթաց գլոբալացմանը համընթաց ՄՄՀԿ-ն վճռական դեր է խաղում այդ նոր համակարգերին օգնելու գործում՝ պայմանագրային բանակցությունների, իրավական եւ տեխնիկական աջակցության, ուսուցողական ծրագրերի տեսքով, ներառյալ մտավոր սեփականության իրավունքների կիրարկման ոլորտը:

Հեղինակային եւ հարակից իրավունքների ոլորտը չափազանց ընդարձակվել է շնորհիվ նոր տեխնոլոգիաների, որոնք կյանքի կոչեցին ստեղծագործություններն ամբողջ աշխարհում տարածելու նոր ուղիներ, ինչպիսիք են արբանյակային հեռարձակումը, CD եւ DVD-ները, Ինտերնետը: ՄՄՀԿ-ն սերտորեն ընդգրկված է նաեւ կիրառական տեխնոլոգիաներում եւ հեղինակային իրավունքի պաշտպանության նոր ստանդարտներ ձեւավորելու ուղղությամբ տարվող շարունակական քննարկումներում:

ՄՄՀԿ-ն կառավարում է **հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների** ոլորտում հետևյալ միջազգային **պայմանագրերը**.

- Գրական եւ գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիա,
- Հաղորդումներ պարունակող ազդանշանների արբանյակի միջոցով տարածմանն առնչվող Բրյուսելի կոնվենցիա,
- Հնչյունագրեր արտադրողներին իրենց հնչյունագրերի չթույլատրված պատճենումից պաշտպանելու մասին Ժնևի կոնվենցիա,
- Կատարողների, հնչյունագրեր արտադրողների, հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության Հռոմի կոնվենցիա ,
- ՄՄՀԿ 1996թ. Հեղինակային իրավունքի մասին պայմանագիր,
- ՄՄՀԿ 1996թ. Կատարումների ու հնչյունագրերի մասին պայմանագիր:

ՄՄՅԿ-ում ստեղծված է նաև **արբիտրաժի ու միջնորդ դատարանի կենտրոն**, որը ծառայություններ է առաջարկում մտավոր սեփականության օգտագործմանն առնչվող մասնավոր անձանց միջև միջազգային առևտրային վեճերի լուծման գործում: Այդպիսի գործընթացների առարկա կարող են լինել ինչպես պայմանագրային վեճերը (ինչպիսիք են գյուտերի եւ համակարգչային ծրագրերի լիցենզիաները, ապրանքային նշանների համաձայնագրերը, գիտահետազոտական եւ զարգացման համաձայնագրերը), այնպես էլ այն վեճերը, որոնք չեն բխում պայմանագրային պարտավորություններից (ինչպիսին է արտոնագրի խախտումը): Կենտրոնը ներկայումս ճանաչված է որպես առաջնակարգ մարմին, որը կարգավորում է Ինտերնետում դոմենի անվան հարկադիր գրանցման եւ օգտագործման հետևանքով առաջացող վեճերը:

## Լրացուցիչ տեղեկություններ

Չեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների տարբեր ասպեկտների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները հասանելի են ՄՄՅԿ ինտերնետային էջում եւ ՄՄՅԿ մի շարք հրատարակությունների միջոցով: Այդ հրատարակություններից շատերը կարելի է անվճար ներբեռնել ինտերնետից:

[www.wipo.int](http://www.wipo.int)  
[www.wipo.int/treaties](http://www.wipo.int/treaties)

ՄՄՅԿ ինտերնետային կայքից մտավոր սեփականության պահպանությունը կարգավորող բոլոր **պայմանագրերի** լրիվ տեքստի ձեռքբերման համար:

[www.wipo.int/ebookshop](http://www.wipo.int/ebookshop)

ՄՄՅԿ էլեկտրոնային գրախանութից հրատարակություններ ձեռք բերելու համար: Դրանք են՝

- Մտավոր սեփականությունը՝ տնտեսական աճի հզոր գործիք - հեղինակ Քամիլ Իդրիս, հրատարակություն N 888,
- Մտավոր սեփականության ձեռնարկ. Քաղաքականություն, Օրենսդրություն եւ Օգտագործում, հրատարակություն N 489,
- Չեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարում, հրատարակություն N 855,
- ՄՄՅԿ հեղինակային եւ հարակից իրավունքների մասին պայմանագրերի ուղեցույց եւ հեղինակային ու հարակից իրավունքների տերմինների բացատրական բառարան, հրատարակություն N 891,
- Չեղինակային իրավունքին հիմնված ինդուստրիալում տնտեսական ներդրումների հետազոտությունների ուղեցույց, հրատարակություն N 893,
- Չեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների լիցենզավորման ՄՄՅԿ ուղեցույց, հրատարակություն N 897,

[www.wipo.int/publications-](http://www.wipo.int/publications-)

անվճար հրատարակություններ ներբեռնելու համար: Դրանք են՝

- ՄՄՅԿ ընդհանուր տեղեկություններ, հրատարակություն N 400,



- Արտիստից՝ հասարակություն. ինչպես են ստեղծագործողները եւ սպառողները օգտվում հեղինակային եւ հարակից իրավունքներից ու գույքային իրավունքների կոլեկտիվ կառավարման համակարգից, հրատարակություն N 922:
- Ստեղծագործական արտահայտություններ. ընդհանուր գիտելիքներ հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար, հրատարակություն N 918:

Մտավոր սեփականության ազգային գրասենյակների ինտերնետային կայքերի հասցեները կարող եք գտնել՝

[www.wipo.int/new/en/links/addresses/ip/index.htm](http://www.wipo.int/new/en/links/addresses/ip/index.htm)



Լրացուցիչ տեղեկությունների կարող եք դիմել  
Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն.(WIPO)

Հասցեն՝  
34, chemin des Colombettes  
P.O. Box 18 CH-1211 Geneva 20 Switzerland  
Telephone: +41 22 338 91 11  
Fax: +41 22 733 54 28  
e-mail: [wipo.mail@wipo.int](mailto:wipo.mail@wipo.int)

կամ Մտավոր սեփականության գործակալություն

Հասցեն՝  
Գլխավոր պողոտա, կառավարական 3  
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն  
Հեռախոս +37410 52 06 73  
Ֆաքս +37410 54 34 67  
Էլ-փոստ [www.cright@aipa.am](mailto:www.cright@aipa.am)

Այցելեք ՄՍՀԿ ինտերնետային կայքը  
[www.wipo.int](http://www.wipo.int) եւ պատվիրեք ՄՍՀԿ էլեկրոնային գրախանութից  
[www.wipo.int/ebookshop](http://www.wipo.int/ebookshop)